# «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Ապրանքային նշանների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծեր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՕՐԵՆՔԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 1-ին հոդվածի 2-րդ մասի 1-ին պարբերությունում «մտավոր գործունեության արդյունքների նկատմամբ բացառիկ իրավունքների (մտավոր սեփականություն)» բառերը փոխարինել «մտավոր սեփականության և մտավոր սեփականության իրավունքների» բառերով:

**Հոդված 2.** Օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5) մտավոր սեփականություն ստեղծելու արդյունքում.»:

**Հոդված 3.** Օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7) ունենալ մտավոր սեփականության  իրավունքներ.»:

**Հոդված 4.** Օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) օրենքով սահմանված կարգով իրականացնել մտավոր սեփականության իրավունքներ.»:

**Հոդված 5.** Օրենսգրքի 132-րդ հոդվածի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) մտավոր սեփականությունը և մտավոր սեփականության իրավունքները.»:

**Հոդված 6.** Օրենսգրքի 140-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Սույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված դեպքերում ու կարգով ճանաչվում է անձի իրավունքը մտավոր սեփականության, այսինքն՝ մտավոր գործունեության արդյունք հանդիսացող հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների օբյեկտների, արդյունաբերական սեփականության օբյեկտների (գյուտեր, օգտակար մոդելներ, արդյունաբերական նմուշներ, սելեկցիոն նվաճումներ, ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաներ, առևտրային կազմակերպությունների, ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների անհատականացման միջոցներ), ինչպես նաև առևտրային գաղտնիքի նկատմամբ:»:

**Հոդված 7.** Օրենսգրքի 141-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

« 1. Ծառայողական և բանկային գաղտնիքների հետ կապված հարաբերությունները սահմանվում են օրենքով:

2. Առևտրային գաղտնիքի հասկացությունը և իրավական պահպանության պայմանները սահմանվում են սույն օրենսգրքի 1164-րդ հոդվածով: Այլ օրենքներով կարող են նախատեսվել առևտրային գաղտնիք պարունակող տեղեկության պահպանության հատուկ պայմաններ:»:

**Հոդված 8.** Օրենսգրքի 1100-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «արդյունքները» բառից հետո լրացնել «, առևտրային գաղտնիքը» բառերը.

2) 2-րդ մասի 6-րդ կետը ուժը կորցրած ճանաչել.

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ մաս.

«5. Մտավոր սեփականությանը և մտավոր սեփականության իրավունքներին առնչվող և սույն օրենսգրքով չկարգավորված հարաբերությունները

կարգավորվում են օրենքով:»:

**Հոդված 9.** Օրենսգրքի 1101-1103-րդ հոդվածներն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 10.** Օրենսգրքի 1110-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 1110. Մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության եղանակները**

1. Մտավոր սեփականության իրավունքների պաշտպանությունն իրականացվում է սույն օրենսգրքի 14-րդ հոդվածով նախատեսված եղանակներով: Մտավոր սեփականության իրավունքների պաշտպանությունը կարող է իրականացվել նաև՝

1) մտավոր սեփականության իրավունքների խախտման համար հիմք ծառայած կամ խախտմամբ ստեղծված նյութական օբյեկտների առգրավմամբ, որոնք իրավախախտ անձի հաշվին ենթակա են ոչնչացման, եթե.

ա. դրանց օգտագործումն անխուսափելիորեն կառաջացնի օրենքով պահպանվող մտավոր սեփականության իրավունքների խախտում,

բ. ապրանքային նշանը կամ դրան շփոթելու աստիճան նման նշանն ապրանքից կամ փաթեթավորումից առանձնացնելն անհնար է.

2) թույլ տրված խախտման վերաբերյալ պարտադիր հրապարակմամբ՝ նշելով նաև, թե ում է պատկանում խախտված իրավունքը, ինչպես նաև թույլ տրված խախտման վերաբերյալ իրավախախտողի հաշվին՝ դատական վճռի ամբողջությամբ կամ մասնակիորեն պարտադիր հրապարակմամբ՝ իրավատիրոջ նշած Հայաստանի Հանրապետությունում գործող զանգվածային լրատվամիջոցում.

3) օրենքով չարգելված այլ եղանակներով:

2. Մտավոր սեփականության իրավունքների նկատմամբ պայմանագրերը խախտվելու դեպքում կիրառվում են պարտավորությունների խախտման համար պատասխանատվության մասին ընդհանուր կանոնները (գլուխ 26):
3. Եթե սույն հոդվածի 1-ին մասում նախատեսված ապրանքը (այդ թվում համակարգիչ, համակարգչային ծրագիր, տեղեկատվություն պահպանելու հնարավորություն ունեցող որևէ այլ սարք) պարունակում է էլեկտրոնային փաստաթղթեր, նամակներ, տվյալների բազաներ կամ այլ օրինական տեղեկատվություն, ապա մինչև տվյալ ապրանքի

առգրավումն ու ոչնչացումն այդ տեղեկատվության իրավատերն իրավունք ունի հանել իրեն պատկանող օրինական տեղեկատվությունը:

4. Սույն հոդվածի 1-ին մասում նախատեսված դեպքերում դատարանը հաշվի է առնում տվյալ գործի բոլոր հանգամանքները, այդ թվում՝ խախտման բնույթն ու կիրառվելիք միջոցի համաչափությունը, արդյունավետությունն ու անհրաժեշտությունը: Դատարանը հաշվի է առնում նաև հայցվորի պահանջը համարժեք դրամական փոխհատուցմամբ բավարարելու հնարավորության հարցը:»:

**Հոդված 11.** Օրենսգրքի 63-67-րդ գլուխները ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 12.** Օրենսգրքի 68-րդ գլխի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔ»:

**Հոդված 13.** Օրենսգրքի 1164-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 1164. Առևտրային գաղտնիքը, դրա իրավական պահպանությունը, պահպանության ժամկետը և բացահայտումը**

1. Առևտրային գաղտնիք է ցանկացած տեղեկությունը, որը՝

1) որպես ամբողջություն կամ իր մասերի ճշգրիտ փոխդասավորվածությամբ և համախմբությամբ ընդհանրապես հայտնի կամ դյուրամատչելի չեն տվյալ կարգի տեղեկատվության հետ սովորաբար առնչվող անձանց համար,

2) երրորդ անձանց անհայտ լինելու ուժով ունեն իրական կամ հնարավոր որոշակի առևտրային արժեք, բայց բացակայում են օրինական հիմքերով դրանց ազատորեն ստանալու հնարավորությունները և

3) օրինականորեն տնօրինող ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից ձեռնարկվել են տեղեկությունն առկա հանգամանքներում գաղտնի պահելու ողջամիտ քայլեր:

2. Առևտրային գաղտնիքի իրավատեր է համարվում այն տնօրինողը կամ օրինական եղանակով ձեռք բերած և տիրապետող անձը: Եթե առևտրային գաղտնիքը կամ դրա որևէ մաս առանց օրենքի խախտման հայտնի է նաև որևէ երրորդ անձի՝ ինքնուրույն ստեղծման (հայտնաբերման) միջոցով, ապա վերջինս ևս օգտվում է իրավատիրոջ համար սույն օրենսգրքով նախատեսված իրավունքներից:

3. Առևտրային գաղտնիքի իրավատերն իրավունք ունի արգելելու երրորդ անձանց օգտագործել իր առևտրային գաղտնիքը կամ դրա որևէ մասը, եթե այն երրորդ անձի կողմից ձեռք է բերվել կամ երրորդ անձը բացահայտել է անօրինական եղանակով:
4. Առևտրային գաղտնիքը պահպանվում է օրենքով` առանց որևէ ձևական պահանջների (պետական կամ այլ գրանցման, հաստատման և այլն) և այնքան ժամանակ, քանի դեռ պահպանվում են սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված պայմանները:
5. Առևտրային գաղտնիքի խախտում է համարվում երրորդ անձի կողմից առանց իրավատիրոջ գրավոր թույլտվության (համաձայնության) այն ձեռք բերելը, օգտագործելը կամ հրապարակելը:
6. Առևտրային գաղտնիքը կամ դրա որևէ մասը առևտրային գաղտնիքի իրավատիրոջ կողմից, վերջինիս իմացությամբ, գրավոր համաձայնությամբ կամ թույլտվությամբ բացահայտվելու դեպքում դադարում է առևտրային գաղտնիք համարվելուց և դառնում է հանրամատչելի տեղեկատվություն:

**Հոդված 14.** Օրենսգրքի 1165-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 1165. Պատասխանատվությունը առևտրային գաղտնիքն ապօրինի օգտագործելու համար**

1. Առևտրային գաղտնիքն ապօրինի եղանակով ստացած, տարածած կամ օգտագործած անձը պարտավոր է առևտրային գաղտնիքի իրավատիրոջը հատուցել դրա ապօրինի օգտագործմամբ պատճառված վնասները:
2. Եթե առևտրային գաղտնիքն օգտագործող անձն այն ստացել է բացահայտելու իրավունք չունեցող անձից, որի մասին չգիտեր և պարտավոր չէր իմանալ (բարեխիղճ ձեռք բերող), ապա առևտրային գաղտնիքի իրավատերն իրավունք ունի ստացողից (այդ թվում բարեխիղճ ձեռք բերողից) պահանջել առևտրային գաղտնիքի`

1) օգտագործման, բացահայտման կամ տարածման անհապաղ դադարեցում.

2) օգտագործմամբ պատճառված վնասների հատուցում, սկսած այն պահից, երբ բարեխիղճ ձեռք բերողն իմացել էր կամ կարող էր իմանալ, որ դրա օգտագործումն ապօրինի է:»:

**Հոդված 15.** Օրենսգրքի 1166-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**«Հոդված 1166. Առևտրային գաղտնիքի նկատմամբ իրավունքը փոխանցելը**

1. Առևտրային գաղտնիքի իրավատերը կարող է առևտրային գաղտնիքի նկատմամբ իրավունքն ամբողջությամբ կամ մասնակիորեն օտարել

(փոխանցել) այլ անձի կամ օգտագործման տրամադրել երրորդ անձանց: Պայմանագիրը կնքվում է գրավոր՝ պարունակելով պայմանագրի գաղտնիության (կոնֆիդենցիալության) դրույթ:
2. Կողմերը պարտավոր են առևտրային գաղտնիքը շարունակել պահել գաղտնի պայմանագրի ժամկետն ավարտվելուց կամ պայմանագիրը լուծվելուց հետո, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:»:

**Հոդված 16.** Օրենսգրքի 1166.1-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 17.** Օրենսգրքի 69-րդ գլուխը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1166.2 հոդվածով.

«**Հոդված 1166.2 Ֆիրմային անվանումը**

1. Ֆիրմային անվանումը քաղաքացիական շրջանառության մասնակիցների անհատականացման միջոց հանդիսացող այն անվանումն է, որի ներքո առևտրային կազմակերպությունն իրականացնում է իր գործունեությունը և տարբերվում է այլ իրավաբանական անձանցից:
2. Ֆիրմային անվանումը պետք է բովանդակի իրավաբանական անձի կազմակերպական-իրավական ձևը բնորոշող բառեր և տարբերակող նշանակության առնվազն մեկ անուն՝ հատուկ անուն (անձնանուն, տեղանքի կամ խորհրդանշական անվանում), հասարակ կամ մտացածին անուն կամ տառերի այլ համակցություն:
3. Տնտեսական ընկերակցության ֆիրմային անվանումը պետք է պարունակի «լիակատար ընկերակցություն» կամ «վստահության վրա հիմնված ընկերակցություն» բառերը և ընկերակցության բոլոր մասնակիցների (լիակատար ընկերների) անունները (անվանումները) կամ ընկերակցության մասնակիցներից (լիակատար ընկերներից) առնվազն մեկի անունը (անվանումը)՝ ավելացրած «և ընկերներ» ու «լիակատար ընկերակցություն» կամ «վստահության վրա հիմնված ընկերակցություն» բառերը:
4. Առևտրային կոոպերատիվի ֆիրմային անվանումը պետք է ցուցում պարունակի նրա գործունեության հիմնական նպատակի մասին:

**Հոդված 18.** Օրենսգրքի 1167-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի՝

ա. 1-ին կետում «անվանումը» բառից հետո լրացնել «օրենքով նախատեսված կարգով, պայմաններով և ժամկետներում.» բառերով.

բ. 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) արգելելու երրորդ անձանց օգտագործել իր ֆիրմային անվանմանը նույնական կամ դրան շփոթելու աստիճան նման ֆիրմային անվանում, եթե դա կարող է սպառողին մոլորության մեջ գցել կամ պատճառ դառնալ դրանց միջև կապ ենթադրելու համար՝ հաշվի առնելով, որ դա կարող է որևէ վնաս հասցնել ֆիրմային անվանման իրավատիրոջը կամ վերջինիս բարի համբավին.».

2) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Երրորդ անձանց կողմից ֆիրմային անվանմանը նույնական կամ շփոթելու աստիճան նման ֆիրմային անվանում  օգտագործելու, այդ թվում՝ դրանով իրավունքներ և պարտականություններ ձեռք բերելու դեպքում, տվյալ ֆիրմային անվանման իրավատերն իր իրավունքները կարող է պաշտպանել դատական կարգով:»:

**Հոդված 19.** Օրենսգրքի 1168-րդ հոդվածի՝

1) 5-րդ մասում «տարբերակող անունը» բառերը փոխարինել «տարբերակող նշանակության անունը» բառերով.

2) 6-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«6. Ֆիրմային անվանման հետ կարող են օգտագործվել նաև դրա կազմակերպական-իրավական ձևը բնորոշող բառերի օտարալեզու թարգմանությունները: Այդ դեպքում ֆիրմային անվանման մեջ պարունակվող տարբերակող նշանակության անունը չի թարգմանվում՝ տառադարձվում է:»:

3)  8-րդ մասի 2-րդ կետում «խորհրդանիշ» բառը փոխարինել «արտահայտություն» բառով:

4) 9-րդ մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հայաստանի Հանրապետությունում պահպանվող ավելի վաղ առաջնությամբ որևէ ապրանքային նշանին կամ կարող են շփոթություն առաջացնել հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում կամ նրա տարածքից դուրս օգտագործվող ապրանքային նշանի նկատմամբ, որը դեռևս օգտագործման մեջ է, պայմանով, որ հայտը ներկայացնելիս հայտատուն գիտեր կամ կարող էր իմանալ այդպիսի ապրանքային նշանի առկայության մասին.».

5) 10-րդ մասում «տարբերակող» բառից հետո լրացնել «նշանակության» բառը.

6) 11-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«11. Ֆիրմային անվանման տարբերակող նշանակության անունների, ինչպես նաև ֆիրմային անվանման տարբերակող նշանակության անվան և քաղաքացիական շրջանառության մասնակիցների, վերջիններիս ապրանքների կամ ծառայությունների անհատականացման որևէ բառային միջոցի միջև շփոթելու աստիճան նմանությունը որոշվում է օրենքով կամ այլ

իրավական ակտերով երկու բառային ապրանքային նշանների, կամ բառային և համակցված ապրանքային նշանների միջև շփոթելու աստիճան նմանությունը որոշելու կանոններով մութաթիս մութանդիս (mutatis mutandis):»:

**Հոդված 20.** Օրենսգրքի 1171-1183-րդ հոդվածներն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 21.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՕՐԵՆՔԸ**

**«ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի հունիսի 15-ի թիվ ՀՕ-142-Ն օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-րդ հոդվածով.

«**Հոդված 4.1. Պաշտոնական փաստաթղթերի, խորհրդանիշների և նշանների նախագծերի նկատմամբ իրավունքները**

1. Պաշտոնական փաստաթղթերի, խորհրդանիշների կամ նշանների նախագծի նկատմամբ հեղինակության իրավունքը պատկանում է նախագիծ ստեղծած անձին (մշակողին):
2. Պաշտոնական փաստաթղթերի, խորհրդանիշների և նշանների նախագծեր մշակողներն իրավունք ունեն հրապարակել նախագիծը, եթե նախագիծը մշակելու հանձնարարությունը տվող մարմինն այն չի արգելում: Նախագիծը հրապարակելիս մշակողներն իրավունք ունեն նշել իրենց անունը:
3. Իրավասու մարմինը պաշտոնական փաստաթուղթ նախապատրաստելու նպատակով կարող է նախագիծն օգտագործել առանց մշակողի համաձայնության, եթե նախագիծը հրապարակել կամ համապատասխան մարմին է ուղարկել մշակողը:
4. Նախագծի հիման վրա պաշտոնական փաստաթղթեր, խորհրդանիշներ

և նշաններ նախապատրաստելիս պաշտոնական փաստաթղթը, խորհրդանիշը կամ նշանը նախապատրաստող մարմնի հայեցողությամբ նախագծում կարող են կատարվել լրացումներ և փոփոխություններ:

5. Իրավասու մարմնի կողմից հավանության արժանանալու դեպքում նախագիծը կարող է օգտագործվել առանց մշակողի անունը նշելու:»:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՕՐԵՆՔԸ**

**«ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Ապրանքային նշանների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի ապրիլի 29-ի թիվ ՀՕ-59-Ն օրենքի 12-րդ հոդվածում`

1) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 12. Ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքը և ապրանքային նշանի օգտագործումը**».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ մաս`

«7. Ապրանքային նշանի օգտագործում է համարվում`

1) այդ ապրանքային նշանի զետեղումն ապրանքների կամ դրանց փաթեթավորման վրա, ինչպես նաև դրա օգտագործումը որպես այդ ապրանքների փաթեթավորում` եռաչափ ապրանքային նշանի դեպքում.

2) այդ ապրանքային նշանով մակնշված ապրանքների վաճառքի առաջարկը, դրանց վաճառքը կամ այդ նպատակով պահեստավորումը կամ այդ ապրանքային նշանով ծառայության մատուցումը կամ դրա առաջարկը.

3) այդ ապրանքային նշանով մակնշված ապրանքների ներմուծումը կամ արտահանումը.

4) այդ նիշի կիրառումը փաստաթղթերի վրա կամ գովազդի նպատակով.

5) այդ ապրանքային նշանի օգտագործումն ինտերնետային կամ հեռահաղորդակցության համաշխարհային համակարգչային այլ ցանցերում, մասնավորապես հասցեագրման ցանկացած միջոցներում, այդ թվում՝ դոմեն անվանումներում.

6) սույն կետի 1-4-րդ ենթակետերում նշված նպատակներով ապրանքային նշանի բազմացումը, պահեստավորումը կամ վաճառքը:»:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: